ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

19-ը մարտի 2024թ.
Ժամը 10^{00}

Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/8» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացումն իրականացվել է 01.03.2024թ.-ին՝ Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: Հանձնաժողովը մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելուց հետո աշխատանքները շարունակեց 15.03.2024թ.-ին:

Մասնակցում էին՝
ՀՀ ՊՆ ԿՇ ԵՎ ԶԲՎ ԶԲՖԿԾ պետ Ա. Պապյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ՆՏԱ բաժնի պետ Հ. Մկրտչյանը,
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ՆՏԱ բաժնի գլխավոր մասնագետ Վ. Մելքոնյանը:
Հանձնաժողովի քարտուղար՝
ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության ԳԿ 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ Մ. Հոխեյանը:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/8» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ. Հոխեյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած Մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/8» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին ըստ չափաբաժինների համապատասխանության մասին, տվյալներ բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Մասնակիցների առաջարկած գները ըստ չափաբաժինների և տեղեկատվություն բանակցության վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ըստ չափաբաժինների «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված մասնակիցների և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած Մասնակիցների մասին.

(Մ. Հոխեյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Շինարարական նյութերի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/8» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/h	Մասնակիցների անվանումները
1	«Ամազոն Իմպորտ ՍՊԸ
2	«ՏՆՄ» ՍՊԸ
3	«Յունիմայն» ՍՊԸ
4	ԱՁ «ՎՈԼՈԴՅԱ ՆԻԿՈՂՈՍՅԱ»
5	«ՋԻ-ԷՍ Քոնսալթինգ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/8» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին ըստ չափաբաժինների համապատասխանության մասին, տվյալներ բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Մ. Հոխեյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/8» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ հետևյալ դեպքի.

- «ՋԻ-ԷՍ Քոնսալթինգ ՍՊԸ կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում /Հավելված 1.1-ի/ 1-ին չափաբաժնի մասով /Խողովակաշարերի սպասարկման սարքեր Ստորգետնյա ջրի վթարի տեղորոշող սարք «Ձայնային հոսորոնիչե (Акустический течеискатель)/, նշված էր՝ «Ստորգետնյա ջրի վթարի տեղորոշող սարք կամ Enigma Compact-3 տիպի, արտադրությունը պետք է լինի ոչ ուշ քան 2021թ», սակայն պարզ չէր թե «ՋԻ-ԷՍ Քոնսալթինգ ՍՊԸ կողմից առաջարկվող Ստորգետնյա ջրի վթարի տեղորոշող սարքը արդյոք Enigma Compact-3 տիպի է թե ոչ, ուստի անհրաժեշտ է հստակեցնել Ստորգետնյա ջրի վթարի տեղորոշող սարքի տիպը:

2.4 Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ 15.03.2024թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցեց «ՋԻ-ԷՍ Քոնսալթինգ ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում /18.03.2024թ./ շտկել վերը արձանագրված անհամապատասխանությունը:

2.5 19.03.2024թ.-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում «ՋԻ-ԷՍ Քոնսալթինգ ՍՊԸ-ի կողմից շտկվել է վերը արձանագրված անհամապատասխանությունը և վերջինիս կողմից ներկայացված հայտը գնահատվեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/8» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Մասնակիցների առաջարկած գները ըստ չափաբաժինների և տեղեկատվություն բանակցության վարման մասին.

(Մ. Հոխեյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան ըստ չափաբաժինների գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝ համաձայն ստորև ներկայացվող Հավելված 1-ի.

Ապրանքի						Կազմակերպության					
Չ/Բ	Անվանումը	Չ/Մ	Քանակ	Նախահաշվային գին /ՀՀ դրամ/		Հ/հ	անվանում	Առաջարկած գումար /ՀՀ դրամ/			Ընտրված մասնակից
				միավորի գին	գումար			առանց ԱԱՀ	ԱԱՀ	ԱԱՀ-ով	
1	խողովակաշարերի սպասարկման սարքեր Ստորգետնյա ջրի վթարի տեղորոշող սարք «Ձայնային հոսորոնիչե (Акустический течеискатель)	հատ	1.00	3,300,000	3,300,000	1	«ՋԻ-ԷՍ Քոնսալթինգ» ՍՊԸ	10,045,000	2,009,000	12,054,000	Պայմանագիր չի կնքվում
2	էլեկտրաբեռնիչ Էլեկտրական բեռնիչ (Электрический вилочный погрузчик)	հատ	1.00	9,800,000	9,800,000	1	«Յունիմայն» ՍՊԸ	6,000,000	1,200,000	7,200,000	Յունիմայն ՍՊԸ
						2	«ՏՆՄ» ՍՊԸ	6,480,000	1,296,000	7,776,000	
						3	«Ամազոն Իմպորտ» ՍՊԸ	8,377,000	0	8,377,000	
3	ձեռքի գործիքներՄետաղական միկրոմետր 0-25մմ (չափող գործիք)	հատ	1.00	17,200	17,200	1	ԱՁ «ՎՈԼՈԴՅԱ ՆԻԿՈՂՈՍՅԱ»	17,200.00	0	17,200	ՎՈԼՈԴՅԱ ՆԻԿՈՂՈՍՅԱ Ա/Ձ

4	ձեռքի գործիքներ Մետաղական ծողակարկին (штангенциркуль) առանց էլեկտրական ցուցիչի, 0-300 մմ չափողականության	հատ	1.00	28,000	28,000	1	ԱՁ «ՎՈԼՈԴՅԱ ՆԻԿՈՂՈՍՅԱ»	28,000.00	0	28,000	ՎՈԼՈԴՅԱ ՆԻԿՈՂՈՍՅԱ Ա/Ձ
5	ձեռքի գործիքներ Մետաղական ծողակարկին (штангенциркуль) առանց էլեկտրական ցուցիչի, 0-125-0.05 մմ չափողականության	հատ	3.00	12,250.00	36,750	Գնային առաջարկի բացակայություն					

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված ըստ չափաբաժինների՝ գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/: Ըստ ներկայացված տվյալների մասնակիցներից ԱԱՀ վճարող են «ՋԻ-ԷՍ Քոնսալթինգ» ՍՊԸ-ն, «Յունիմայն» ՍՊԸ-ն և «ՏՆՄ» ՍՊԸ-ն, իսկ «Ամազոն Իմպորտ» ՍՊԸ-ն և ԱՁ «ՎՈԼՈԴՅԱ ՆԻԿՈՂՈՍՅԱ»-ն ԱԱՀ վճարող չեն: 1-ին չափաբաժնի մասով «ՋԻ-ԷՍ Քոնսալթինգ» ՍՊԸ կողմից առաջարկված գինը գերազանցում էր պատվիրատուի տվյալ գնման համար պլանավորած նախահաշվային գինը:

3.3 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/8» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում բանակցություններ չեն վարվել:

3.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/8» ծածկագրով ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջները՝ (պայմանագիր չի կնքվում), իսկ 5-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջները՝ (ոչ մի հայտ չի ներկայացվել):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ըստ չափաբաժինների «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված մասնակիցների և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Մ. Հոխեյան)

4.1 19.03.2024թ.-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, Armeps (www.armeps.am) համակարգում էլեկտրոնային գնահատման արդյունքում, գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/8» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/8» գնանշման հարցման ընթացակարգում ըստ չափաբաժինների հայտարարել ընտրված մասնակիցներին՝ համաձայն վերը ներկայացված Հավելված 1-ի: Բավարար գնահատված մնացած մասնակիցները ճանաչվեցին այդպիսին չճանաչված մասնակիցներ՝ ըստ համապատասխան չափաբաժնի համար ներկայացրած գնային առաջարկների:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/8» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/8» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.4 Սույն ընթացակարգում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն կիրառվում է տասնօրյա անգործության ժամկետ:

4.5 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/8» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներին ըստ չափաբաժինների պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
(Մ. Հոխեյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.
(Մ. Հոխեյան)

6.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված **գնման առարկաների** բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)		Ա. Պապյան
Գնահատող		Հ. Մկրտչյան
Գնահատող		Վ. Մելքոնյան
Հանձնաժողովի քարտուղար՝		Մ. Հոխեյան